ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն **Պատմություն**

Թեմա **1920թ, թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը**

Կատարող **Ղազարյան Աստղիկ Ռուբենի**

Ղեկավար **Արմինե Եփրիկյան պատմ. գիտ. թեկ., դոցենտ**

ԵՐԵՎԱՆ 2022

Առարկա-Հայոց պատմություն

Դասարան- IX

Ուսուցիչ- Ա. Ղազարյան

Թեմա-1920թ.թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը:

Դասի նպատակը՝

1. Գնահատել և արժևորել հայրենիքի գաղափարը
2. Պարզաբանել թուրք-հայկական պատերազմի պատճառները, առիթը և սկիզբը
3. Ներկայացնել պատերազմի ընթացքը և պարտության պատճառները
4. Գնահատել Ալեքսանդրապոլի պայմանագիրը
5. Վերլուծել Հայաստանի հանրապետության անկման պատճառները
6. Գտնել համեմատական եզրեր 1920թ. և 2020թ. պատերազմների միջև
7. Սերմանել հզոր պետություն ունենալու անհրաժեշտությունը

Ուսումնադիտողական պարագաներ - նկարներ, գծապատկերներ, սահիկաշար:

Լրացուցիչ գրականություն - «Հայոց պատմություն» /Հր. Սիմոնյանի խմբ./, Գ. Նժդեհ «Խաբված ժողովուրդ»:

Դասը վարել բրիտանացի հոգեբան, ստեղծագործող, մտածելակերպի հայտնի փորձագետ Էդվարդ դե Բոնոյի **«Մտածողության 6 գլխարկներ»** մեթոդի միջոցով:

Դասանյութը և լրացուցիչ փաստերը ամբողջ դասարանի կողմից յուրացնելուց հետո, աշակերտներին բաժանել 6 խմբի, որտեղ ներգրավված կլինեն տարբեր ունակությունների տեր աշակերտներ: Խմբերից յուրաքանչյուրը կկատարի իր գործառույթը: Յուրաքանչյուր խմբի սեղանին կդրվի համապատասխան գույնի գլխարկ:

1. **Կապույտ գլխարկ-Կառավարում**

«Կրելով» կապույտ գլխարկ՝ տվյալ խումբը դառնում է ուղորդող և պատասխանատու թեմայի քննարկման համար:

2. **Սպիտակ գլխարկ-Փաստեր և տեղեկատվություն**

«Կրելով» սպիտակ գլխարկ՝ տվյալ խումբը դառնում է պատասխանատու քննարկման թեմայի շուրջ լրացուցիչ փաստերի և ինֆորմացիայի համար:

3. **Կարմիր գլխարկ-Զգացմունքներ**

«Կրելով» կարմիր գլխարկ՝ մասնակիցները արտահայտում են իրենց կարծիքները՝ հիմնված անձնական զգացմունքների վրա:

4. **Սև գլխարկ-Քննադատություն**

«Կրելով» սև գլխարկ՝ տվյալ խումբը բերում է փաստարկներ, որոնք կազմում են քննարկվող թեմայի թույլ կողմերը և հնարավոր քննադատությունները:

5. **Դեղին գլխարկ-Լավատեսություն**

«Կրելով» դեղին գլխարկ՝ տվյալ խումբը նշում է քննարկվող թեմայի բոլոր առավելությունները և դրական կողմերը:

6. **Կանաչ գլխարկ-Պատգամ և ստեղծարարություն**

«Կրելով» կանաչ գլխարկ՝ տվյալ խումբը հանդես է գալիս թեմային առնչվող պատգամներով և նորարարական գաղափարներով:

- Դասը սկսել հայ մեծ մտածող, քաղաքական գործիչ **Գարեգին Նժդեհի** խոսքերով. /ներկայացնում է կանաչ խումբը/

«Դատապարտելի է պայմանական հայրենասիրությունը: Հայրենիքը պետք է սիրել անկախ իր քաղաքական ռեժիմից, ինչպես նաև անկախ քաղաքական համոզմունքներից»:

Նժդեհի խոսքերը քննարկելուց հետո, աշակերտները հայրենիքը դիտարկեցին որպես բարձրագույն արժեք, կարևորեցին անշահախնդիր սերը հայրենիքի նկատմամբ:

- Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտի /թույլ ունակությամբ/ հանձնարարել ինքնուրույն աշխատանք օրվա թեմայի շուրջ: Տրված նախադասությունների դիմաց աշակերտները պետք է տեղադրեն համապատասխան գլխարկի գույնը և ամբողջացնեն աշխատանքը: Աշխատանքը ներկայացվում է ստորև.

1920թ. թուրք-հայկական պատերազմը

Հայաստանի խորհրդայնացումը

Ինքնուրույն աշխատանք

1. 1920թ. հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության, ընկավ Կարսը: Կարսի անկումը որոշեց պատերազմի ելքը: Մի քանի օր անց, նոյեմբերի 7-ին, հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը:

2. Հայկական կողմը տարածքային մեծ կորուստներ կրեց: Եթե 1920թ. պատերազմի դեպքում առանց լուրջ դիմադրության ընկավ Կարսը, ապա 2020թ.-ին՝ Շուշին:

3. Անձնական երջանկության վարդապետություն. ահա թշնամին մեր ցեղի հավաքական երջանկության:

4. Պատերազմի արդյունքում հայ ժողովուրդը պահպանեց իր ազգային ինքնությունը և հայրենիքի մի մասը, ինչպես նաև փրկվեց ֆիզիկական բնաջնջումից:

5. Նորաստեղծ հայկական պետությունը չկարողացավ ճկուն լինել միջազգային բարդ իրադրության պայմաններում: Մինչև վերջին պահը կառավարությունը հետևում էր արևմտյան կողմնորոշմանը, մեծ հույսեր էր կապում Սևրի պայմանագրի հետ:

6. 1920թ. գարնանը Անկարայում ստեղծված Քեմալի կառավարությունը բարեկամանալու առաջարկ արեց Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, քանի որ աշխարհամարտից թուլացած Թուրքիան ակնկալում էր Ռուսաստանից ստանալ տնտեսական, ֆինանսական և ռազմական օգնություն:

- Սահիկաշարի ենթահարցերի օգնությամբ աշակերտները պետք է ներկայացնեն օրվա թեմայի փաստերը և զուգահեռ պարզաբանեն լրացուցիչ տեղեկությունները:

- **Թուրք-հայկական պատերազմը** /դասագրքի նյութը ներկայացնում է կապույտ խումբը/
- **Պատերազմի սկիզբը**
- **Պատերազմի առիթը**
- **Տարածքային կորուստները**

- **Զինադադարի կնքումը**

1920թ. սեպտեմբերի 23-ին քեմալական Թուրքիան, առիթ համարելով Օլթիի ածխահանքերի գրավումը հայկական զորքերի կողմից, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Սկսվեց թուրք-հայկական պատերազմը, որը տևեց շուրջ երկու ամիս: Սեպտեմբերի 28-ից ծավալվեցին վճռական ռազմական գործողությունները: Սեպտեմբերի 29-30-ին թշնամին գրավեց Սարիղամիշն ու Մերդենենկը: Ի սկզբանե պատերազմն անհաջող ընթացք ունեցավ հայկական կողմի համար: Թուրքական 50-հազարանոց զորքը քանակապես գերազանցում էր հայկականին, որի ընդհանուր թվաքանակը հասնում էր շուրջ 40 հազարի:

1920թ. հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության, ընկավ Կարսը: Կարսի անկումը փաստորեն որոշեց պատերազմի ելքը: Նոյեմբերի 7-ին հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը: Լիակատար ջախջախումից խուսափելու և քիչ թե շատ ընդունելի հաշտություն կնքելու նպատակով նոյեմբերի 18-ին կողմերի միջև վերջնական զինադադար կայացվեց, դադարեցվեցին ռազմական գործողությունները: Ընդհանուր առմամբ՝ հայկական բանակը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ:

- **Թուրք-հայկական պատերազմի պատճառները**

/լրացուցիչ փաստերը ներկայացնում է սպիտակ խումբը/

- **Խորհրդա-թուրքական մերձեցումը և նրանց շահերը**
- **1920թ. Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը**

1920թ. գարնանը Անկարայում ստեղծված Քեմալի կառավարությունը բարեկամանալու առաջարկ արեց Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, քանի որ աշխարհամարտից թուլացած Թուրքիան ակնկալում էր Ռուսաստանից ստանալ տնտեսական, ֆինանսական և ռազմական օգնություն:

Նրանց շահերը համընկնում էին, քանի որ և՛ Խորհրդային Ռուսաստանը, և՛ Քեմալական Թուրքիան պայքարում էին իմպերիալիստական Անտանտի դեմ: Բացի

այդ քեմալականները կեղծավորաբար հայտարարում էին, թե իրենք կոմունիստների մնան հեղափոխականներ են և նպատակ ունեն Թուրքիայում և Արևելքի մուսուլմանական երկրներում հաստատել սոցիալիզմ:

Քեմալա-բոլշևիկյան մերձեցումը 1920թ. աշնանը սկսեց տալ իր դառը պտուղները: Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի ճիրաններում սեղմված Հայաստանը հայտնվեց քաղաքական աղետի առաջ: Քեմալի կառավարությունը չէր հաշտվում Սևրի դաշնագրով Թուրքիային պարտադրված տարածքային կորուստների հետ:

Դեռևս 1920թ. հունիսին քեմալական բանակները պատրաստ էին Հայաստանի վրա հարձակվելու: Միայն Ռուսաստանի համաձայնության բացակայությունն էր զսպում թուրքերի եռանդը: Դրանով հանդերձ ամբողջ թափով ընթացքի մեջ էր Հայաստանի դեմ քարոզչական մեքենան:

Հակահայկական քարոզչության գործիք դարձավ հատկապես 1920թ. սեպտեմբերին Բաքվում գումարված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը Էնվեր փաշայի և այլ հայատյաց գործիչների ղեկավարությամբ, որտեղ բացահայտ հակահայկական որոշումների կողքին գործնական ձև ստացավ Հայաստանի դեմ պատերազմը խորհրդայնացմամբ ավարտելու հստակ նպատակադրումը: Համագումարի մասնակիցների կողմից մշակվեց մի փաստաթուղթ, որում Հայաստանը, իբրև «միջազգային իմպերիալիզմի գործակալ», մեղադրվում էր Անգլիայի և Պարսկաստանի հետ Խորհրդային Ադրբեջանի վրա հարձակվելու մտադրության մեջ: Առաջարկվում էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել քեմալականներին և նախահարձակ լինել Հայաստանի վրա, որի ակնհայտ պարտության պայմաններում հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից «փրկելու» պատրվակով այստեղ պետք է մտնեին ռուսական զորքերը, որոնք, իբրև «ազատարարներ», պետք է խորհրդայնացնեին Հայաստանի թուրքական բռնազավթումից զերծ մնացած մասը:

Այսպիսով, ավարտված էին Հայաստանի դեմ պատերազմի ռազմական ու դիվանագիտական պատրաստությունները, և Բաքվից վառած կանաչ լույսն ազդանշան հանդիսացավ քեմալական ուժերի առաջխաղացման համար:

- **ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումները և դիվանագիտական քայլերը** /ներկայացնում են կապույտ խումբը/
    - **Արտակարգ միջոցառումների ձեռնարկումը**
    - **Դաշնակից երկրների անտարբերությունը**
    - **Մեծ Բրիտանիայի օգնությունը**
    - **Խորհրդային Ռուսաստանի չեզոքությունը**

ՀՀ կառավարությունը մի շարք արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց՝ երկիրը պատերազմական պայմաններին համապատասխանեցնելու համար: Երկրում մտցվեց ռազմական դրություն, դասալքության համար սահմանվեց մահապատիժ, հայտարարվեց 20-35 տարեկան տղամարդկանց զորահավաք, արտակարգ լիազորություններով ճակատ մեկնեցին շատ նախարարներ ու պատգամավորներ, և այլն:

Կառավարությունը դիմեց նաև դիվանագիտական քայլերի՝ դրսից օգնություն ու աջակցություն ստանալու համար: Սակայն «դաշնակից» երկրները՝ Ֆրանսիան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, ինչպես նաև ԱՄՆ-ը, հայ ժողովրդի համար ճակատագրական այդ պահին անտարբեր գտնվեցին՝ թողնելով նրան միայնակ: Թերևս միակ շոշափելի օգնությունը ստացվել էր Մեծ Բրիտանիայից՝ մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ/ոսկով/ գումարի չափով զենք, զինամթերք ու հանդերձանք: Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, ապա նա վարում էր չմիջամտելու քաղաքականություն: Պատերազմի ամբողջ ընթացքում խորհրդային կառավարությունը ոչ մի անգամ հանդես չեկավ նոտայով կամ հայտարարությամբ, որ կողմերը վերջ տան պատերազմին և նստեն բանակցությունների սեղանի շուրջ:

- **Աշխարհի վերաբերմունքը** / լրացուցիչ փաստերը ներկայացնում է սպիտակ խումբը/

- **Քաղաքակիրթ մարդկության լռությունը**
- **Ազգերի Լիգայի անտարբերությունը**
- **Հայաստանի մանդատի մերժումը**

Հայաստանի համար բախտորոշ այդ օրերին նյութական և դիվանագիտական աջակցություն ստանալու ակնկալիքով դիմումներ հղվեցին Թիֆլիսում գտնվող անգլիական, ֆրանսիական և իտալական դիվանագիտական ներկայացուցիչներին: Իսկ հոկտեմբերի 8-ին՝ ամբողջ քաղաքակիրթ մարդկությանը, բայց աշխարհը լուռ էր:

Հայասիրական ճառերով բավարարվեց նաև Ազգերի լիգան և մերժեց Հայաստանին իր կազմի մեջ ընդունելու հարցը, որպեսզի պարտավորված չլինի, իր կանոնակարգի համաձայն, օգնել նրան:

Իսկ ԱՄՆ կառավարությունը չնայած փաստացի ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ նախագահ Վիլսոնը համաձայնեց ստանձնել իրավարարի առաքելությունը, սակայն ԱՄՆ-ի Սենատը մերժեց Հայաստանի մանդատը:

Այսպիսով, Հայաստանը միայնակ մնաց ոխերիմ թշնամու դեմ:

- **Հայաստանի պարտության պատճառները** /ներկայացնում է կապույտ խումբը/
- **Բանակի մարտունակության պակասը**
- **Բոլշևիկների հաճախացող հարձակումները**
- **Թուրք-թաթարական շարունակական խռովությունները**

Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության պատճառներից հիմնականն այն էր, որ բանակը չցուցաբերեց անհրաժեշտ կամք ու մարտունակություն և պատշաճ կազմակերպվածություն: Բանակում այն տրամադրությունն էր իշխում,որ իրենք գործ ունեն ռուս-թուրքական միացյալ հզոր ուժերի հետ: «Նման պատկերացումը,-նշել է զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյան,-ճակատագրական ազդեցություն է ունեցել բանակի մարտունակության վրա և պատճառ դարձել հոգեբանական անկման, որը հանգեցրել է նրա այն

գիտակցությանը, թե իր ուժերը չնչին են հակառակորդի նկատմամբ»: Իր բարձրության վրա չգտնվեց բանակի հրամանատարությունը: Իսկ ռուսախոս սպայակազմը հանդես չբերեց հայրենիքի ու պետության հանդեպ նվիրվածություն, ինչը բացասաբար էր ազդում զինվորականության վրա:

Բանակում գլուխ էր բարձրացրել դասալքությունը,որում, իր բացասական դերը խաղաց նաև բոլշևիկների քայքայիչ քարոզչությունը՝ քեմալական «ընկերներին» օգնելու նպատակով, որպեսզի դաշնակցականների կառավարությունը տապալվի և իրենք գան իշխանության:

Թուրք-հայկական ճակատում հայկական բանակի պարտության պատճառների թվին պետք է դասել նաև այն, որ հայկական զինուժի մի մասը ստիպված էր գամված մնալ Ղազախի,Բասարգեչարի և Շարուր-Դարալագյազի շրջաններում՝ պաշտպանելու սահմանները բոլշևիկների հաճախացող հարձակումներից: Նշվածներից զատ՝ երկրի պաշտպանության գործին խոչընդոտում էին նաև թուրք-թաթարական շարունակական խռովությունները:

- **Պարտության այլ պատճառներ** /լրացուցիչ փաստերը ներկայացնում է սպիտակ խումբը/
- **Միասնականության բացակայությունը**
- **Ժողովրդի անտարբերությունը**

Չնայած ձեռնարկված մի շարք ջանքերին, ցավոք, պատերազմը չստացավ համաժողովրդական հնչեղություն:Հայությունը չդրսևորեց բացարձակ միասնականություն ու համերաշխություն, ինչպիսին ի հայտ էր բերել 1918թ. մայիսյան հերոսամարտերի օրերին: Հատկապես բարձրության վրա չգտնվեց ճակատամերձ շրջանի բնակչությունը: Նա ենթարկվեց խուճապի, որը բացասաբար ազդեց զորքի տրամադրության վրա: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ հանրապետությունում անընդհատ տեղի ունեցող ներքին և արտաքին բախումները խիստ հոգնեցրել էին ժողովրդին՝ նրան մղելով խաղաղ օրերի երազանքին:Ստեղծված պայմաններում Անդրկովկաս մտած ռուսական խորհրդային

ուժերը ավանդույթի ուժով, ընկալվում էին որպես կայունության երաշխավորներ: Բնական է, որ նման մտայնությունը դրսևորվում էր նաև բանակում: Ժողովրդի և զորքի այդ պարտվողական հոգեբանությունը օգտագործեցին բոլշևիկները և խորհրդայնացրեցին Հայաստանը:

- **Հաշտության բանակցությունները և պայմանագրի կնքումը** /ներկայացնում է կապույտ խումբը/
  - **ՀՀ կառավարության փոփոխությունը**
  - **Թուրք-հայկական բանակցությունների սկիզբը**
  - **Պայմանագրի բովանդակությունը**

Հայաստանի ռազմական պարտությունը առաջ բերեց քաղաքական ճգնաժամ: 1920թ. նոյեմբերի 23-ին հրաժարական տվեց Հ. Օհանջանյանի բյուրո-կառավարությունը, կազմվեց Ս. Վրացյանի կոալիցիոն կառավարությունը Էսեռների մասնակցությամբ, որն էլ նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում հաշտության բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Հայկական պատվիրակությունը ղեկավարում էր Ալ. Խատիսյանը, իսկ թուրքականը՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան: Վերջինս հայկական պատվիրակությանը թելադրեց հաշտության պայմանները, իսկ նոյեմբերի 30-ին Հայաստանին ներկայացրեց վերջնագիր:

Հաշվի առնելով հայ ժողովրդի գլխին կախված թուրքական մահացու վտանգը՝ Հայաստանի կառավարությունը իր գոյության մայրամուտին՝ դեկտեմբերի 1-ին հարկադրված ընդունեց թուրքական դաժան վերջնագրի պայմանները: Եվ 1920թ. դեկտեմբերի 2-3-ի գիշերը Ալ. Խատիսյանը ստորագրեց Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը:

- ✓ Հայաստանը հրաժարվում էր Սևրի դաշնագրից:
- ✓ Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, որը երբեք չէր եղել Թուրքիայի կազմում:
- ✓ Նախիջևանի մարզը անցավ Թուրքիայի հովանու տակ և շուտով /Մոսկվայի պայմանագրով/ հանձնվեց Ադրբեջանին:

✓ Հայ-թուրքական պետական սահման դարձան Ախուրյան և Արաքս գետերը:

✓ Հայաստանին թույլատրվում էր ունենալ սահմանափակ թվով զինուժ:

- **Անօրինական պայմանագիրը** /լրացուցիչ փաստերը ներկայացնում է սպիտակ խումբը/

Միջազգային իրավունքի տեսանկյունից Ալեքսանդրապոլի պայմանագիրը անօրինական էր, քանի որ պայմանագրի ստորագրման պահին պատվիրակություններից ոչ մեկը լիազորված չէր հանդես գալու իր երկրի անունից: Հայկական պատվիրակությունը արդեն չէր ներկայացնում երկրի իշխանությունը, իսկ թուրքական պատվիրակությունը դեռևս չէր ներկայացնում երկրի իշխանությունը: Հետագայում այս փաստաթուղթը թոխարինվեց 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով:

- **Երևանի համաձայնագիրը, Հայաստանի խորհրդայնացումը** /ներկայացնում է կապույտ խումբը/

- **Հայ-ռուսական ընդհատված բանակցությունների վերսկսումը**
- **Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի մուտքը Իջևան**
- **Երևանի համաձայնագրի կնքումը**
- **ՀՀ անկումը**

1920թ. հուլիսին Մոսկվայում ընդհատված հայ-ռուսական բանակցությունները վերսկսվեցին Երևանում միայն հոկտեմբերի կեսին, այն ժամանակ, երբ սկսվել էր թուրք-հայկական պատերազմը: Ռուսական կողմից բանակցությունները վարում էր Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը: Նրա դիվանագիտական առաքելության նպատակն էր միջնորդական դեր կատարել

Թուրքիայի ու Հայաստանի միջև և, նպաստավոր պայմաններ ստեղծելով, խորհրդայնացնել Հայաստանը:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ժամանակ էր շահում, սպասում, որ Հայաստանը լիակատար ռազմական պարտություն կրի Թուրքիայից, և հարմար պահին խաղաղ ճանապարհով խորհրդայնացնի:

Նոյեմբերի վերջին, երբ Հայաստանը արդեն պարտվել էր,երկրի խորհրդայնացումը դարձավ օրակարգի հարց: Խորհրդային կառավարությունը Բ. Լեգրանի միջոցով պահանջեց Հայաստանի խորհրդայնացում:Մինչ այդ արդեն 11-րդ բանակի զորամասերին հրահանգված էր մտնել Հայաստան և խորհրդայնացնել երկիրը:

1920թ. նոյեմբերի 29-ին Ադրբեջանում ստեղծված ՀՌՀԿ Սարգիս Կասյանի նախագահությոմբ և կարմիրբանակայինների ուղեկցությամբ Ղազախից մուտք գործեց Հայաստան՝ Քարվանսարա/Իջևան/, և հայտարարություն արեց Հայաստանի խորհրդայնացման մասին:

Ստեղծված ռազմաքաղաքական ճգնաժամի պայմաններում 1920թ. դեկտեմբերի 1-ին հանրապետության բարձրագույն ղեկավարությունը որոշեց ընդունել <<կարմիրների>> առաջարկը Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին, Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից մի քանի ժամ առաջ Երևանում, Հայաստանի ներկայացուցիչ Դրոյի և Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Հայաստանը հռչակվեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Տեղի ունեցավ իշխանության խաղաղ փոխանցում: Ս. Վրացյանի կառավարությունը կամավոր հեռացավ ասպարեզից, և ամբողջ իշխանությունը անցավ Հայաստանի Հեղկոմի ձեռքը:

Այսպիսով՝ քեմալա-բոլշևիկյան ռազմաքաղաքական հարվածների տակ Հայաստանի Հանրապետությունը անկում ապրեց և խաղաղ ճանապարհով խորհրդայնացվեց: Ստեղծված իրավիճակում Հայաստանը այլընտրանք չուներ: Խորհրդային Հայաստանը դարձավ Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդը:

- **Զգացմունքներ** /Կարմիր խմբի աշակերտները ներկայացնում են իրենց հույզերն ու ապրումները այս թեմայի շուրջ/

Ծանոթանալով թեմայի առանցքային իրադարձություններին և համակողմանի ուսումնասիրելով դասանյութը, մեզ մոտ, առաջացան էլ ավելի տխուր և մտահոգիչ զգացմունքներ, քանի որ, մինչ պատերազմը այս դասերը պարզապես պատմական իրադարձություններ էին, իսկ 2020թ. պատերազմից հետո դրանք առավել հուզական են, քանի որ 100 տարի անց մենք մասամբ վերապրեցինք նույն իրադարձությունները: Պատմությունը կարծես կրկնվում է, իսկ մենք դասեր չենք քաղել: Հատկանշական է, որ և՛ 1920թ., և՛ 2020թ.-ի պատերազմը սկսվել է սեպտեմբեր ամսին: Երկու դեպքում էլ, այդ ճակատագրական պահին Եվրոպան և ամբողջ աշխարհը լուռ էր, ընդ որում 1920թ. պատերազմի դեպքում անտարբեր գտնվեց Ազգերի լիգան, իսկ 2020թ.-ին՝ ՄԱԿ-ը: Պատերազմների ընթացքում բանակում բարոյահոգեբանական անկում կար, հայերի կորուստ նշանակալի էր, մեծ էր նաև գերիների թիվը: Հայկական կողմը տարածքային մեծ կորուստներ կրեց. 1920թ. ընկավ Կարսը, իսկ 2020թ.-ին՝ Շուշին: Եվ այս տարածքների կորստով կարծես կանխորոշվեց պատերազմի ելքը: Երկու դեպքում էլ կնքվեց ծանր պայմաններ նախատեսող պայմանագիր, ընդ որում 1920թ.-ին կործանվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, իսկ այսօր կորցնելով մեր հայրենիքի զգալի մասը մենք ապրում ենք անորոշ իրականության մեջ: Սակայն հույս ունենք, որ հայ ժողովուրդը կդրսևորի համախամբվածություն և անկախ քաղաքական հայացքներից կնպաստի մեր հայրենիքի հզորացմանը:

- **Քննադատություն** / սև խմբի աշակերտները ներկայացնում են իրենց քննադատական մոտեցումները/

1920թ. պատերազմի նախօրեին Հայաստանը պատրաստ չէր դիմակայել անողոք թշնամուն, քանի որ 20-րդ դարի սկզբին ցեղասպանություն ապրած հայ ժողովուրդը, թշնամու մահաբեր սպառնալիքի պայմաններում, չնայած, ուժ գտավ իր

մեջ և վերականգնեց հայոց անկախ պետականությունը, այնուամենայնիվ նորանկախ պետությունը գտնվում էր քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում:

Անկասկած պետք է նշել, որ նորաստեղծ հայկական պետությունը չկարողացավ ճկուն լինել միջազգային բարդ իրադրության պայմաններում. մինչև վերջին պահը կառավարությունը հետևում էր արևմտյան կողմնորոշմանը, մեծ հույսեր էր կապում Սևրի պայմանագրի հետ, սակայն ակնհայտ էր, որ Եվրոպան ցանկություն չուներ օգնել Հայաստանին: Քննադատության է արժանի նաև Խորհրդային Ռուսաստանի չմիջամտելու քաղաքականությունը, որը տրամաբանորեն հանգեցրեց ՀՀ անկմանը: 2020թ. պատերազմի դեպքում ևս Հայաստանը օգնություն չստացավ որևէ պետության կամ կազմակերպության կողմից, իսկ առաջադեմ աշխարհը չդատապարտեց ագրեսոր երկրին և նրա հրեշավոր քայլերը, որը հանգեցրեց 2020թ. կապիտուլացիոն համաձայնագրին:

Զուգահեռներ տանելով մերօրյա իրադարձությունների միջև, անհրաժեշտ է նշել, որ 2020թ. պատերազմի նախօրեին ևս Հայաստանը չկարողացավ պատշաճ դիմադրություն կազմակերպել թշնամու դեմ, քանի որ 21-րդ դարի սկզբին արբեցած 1990-ական թթ. պատերազմի հաղթական ելքով, քայլեր չէին ձեռնարկվել հնարավոր պատերազմին դիմակայելու համար:

Հարկ է նշել նաև հրամանատարական կազմի փոխհարաբերությունները և անմիաբանությունը, որը ծանր հետևանքներ ունեցավ: Պատերազմի ամբողջ ծանրությունը զինվորի ուսերին էր, այն դեպքում, երբ 1920թ. պատերազմի ընթացքում հայ զինվորը չէր տիրապետում անգլիական ժամանակակից զինատեսակներին, իսկ 2020թ.-ին ի տարբերություն մեր թշնամուն, հայ զիվորը չուներ գերժամանակակից զինտեխնիկա:

1920թ. և 2020թ. պատերազմներն ու քաղաքական գործընթացները որոշակի նմանություն ունեն, ինչը բնական է, քանի որ 100 տարվա ընթացքում մեր տարածաշրջանի հիմնական խաղացողները չեն փոխվել: Չեն փոխվել նաև տարածաշրջանի երկրների քաղաքական, տնտեսական, ռազմական խնդիրներն ու աշխարհի ազդեցիկ բեևեռների մրցակցությունը: Հետևաբար 1920թ. և 2020թ. իրադարձությունները արդի պայմաններում ունեն գործնական-քաղաքական

նշանակություն. դա ՀՀ կշռադատված քաղաքականությունն է այլ երկրների հետ, իսկ ամենակարևորը հայ ժողովրդի միասնության, հայրենասիրության և հեռատեսության անհրաժեշտությունը:

- **Լավատեսություն** / դեղին խմբի աշակերտները ներկայացնում են թեմայի դրական կողմերը/

Փորձել ենք այս տխուր և հուսահատ թեմայից հնարավորինս առանձնացնել դրական կողմերը և այնուամենայնիվ լինել լավատես: Երկար քննարկումների արդյունքում մենք եկանք այն համոզմանը, որ 1920թ. պատերազմի արդյունքում հայ ժողովուրդը պահպանեց իր ազգային ինքնությունը և հայրենիքի մի մասը, ինչպես նաև փրկվեց ֆիզիկական բնաջնջումից: Եվ չնայած ՀՀ-ն խորհրդայնացվեց, սակայն Խորհրդային Հայաստանը դարձավ Հայաստանի 1-ին հանրապետության իրավահաջորդը, որի հիման վրա 1991թ. հռչակվեց Հայաստանի 3-րդ հանրապետությունը: 1922թ. ՀԽՍՀ-ն մտավ ԽՍՀՄ կազմի մեջ և նրա պաշտպանությունը դարձավ ապահով: Այս տարիների ընթացքում Հայաստանը ունեցավ մեծ նվաճումներ տնտեսության, կրթության և մշակույթի բնագավառներում:

ՀԽՍՀ որոշ ղեկավարներ անկախ քաղաքական ռեժիմից և իրենց քաղաքական համոզմունքներից նպաստեցին Հայաստանի հզորացմանը:

- **Պատգամ և ստեղծարարություն** /ներկայացնում են կանաչ խմբի աշակերտները /

Որպես թեմայի ամփոփում, կանաչ խմբի անդամները, ներկայացրեցին նժդեհյան ասույթներ, որոնք ավարտեցին հայ երիտասարդությանը ուղղված պատգամներով:

Նաև հանդես եկան ստեղծարարությամբ և պատկերեցին մի նկար, որն արտահայտում էր քննարկվող թեմայի միտքը և խորհրդանշում մեր ապագան:

Անձնական երջանկության վարդապետությունը. ահա՛ թշնամին մեր ցեղի հավաքական երջանկության

ԵՂԵ՛Ք ՄԻԱՍՆԱԿԱՆ

Մեղավոր է մարդկությունը մեր հանդեպ, սակայն անմեղ չենք և մենք: Մերն է մեղքի մեծ բաժինը, քանզի մեր ձեռքն է բանալին այն բոլոր դրությունների, որոնց մեջ կարող էինք լինել, քանզի մենք ենք մեր ճակատագրի ճարտարապետը:

ԵՂԵ՛Ք ՀԱՅՐԵՆԱՍԵՐ

Վայ այն երկրին, որի որդիները պայքարի են մտնում հայրերից թողնված զենքերով: Պարտությունն է նրանց բաժինը: Քիմիական լիակատար սպառազինություն, ահա մեր օրվա կարգախոսը:

ՋԻՆՎԵ՛Ք, ԵՂԵ՛Ք ԱՀԱԲԵԿԻՉ

Ասույթները քննարկելուց և մեկնաբանելուց հետո, որպես ամփոփում, աշակերտները ներկայացնում են օրվա թեմայի շուրջ իրենց պատկերացումները նկարի տեսքով:

Գոյի պայքարում ի վերջո հաղթում է ուժեղը, ի վերջո հաղթում է գիտելիքով զինվածը:

Ա. Տեր-Թադևոսյան(Կոմանդոս)

Քննարկվող թեման պատկերված է նկարի տեսքով, որում վեր խոյացող երկու ծաղիկների կապույտ գույնը արտացոլում է հայ ժողովրդի խաղաղության ձգտումը, իսկ ծաղիկները արտահայտում են գոյի պայքարում վերածնված Հայաստանն ու Արցախը, որոնք 1920թ. և 2020թ. պատերազմներում պահպանել են իրենց ազգային ինքնությունը հայ զինվորի շնորհիվ, ով նկարում հանդես է գալիս գլխարկի տեսքով: Իսկ նոր բացվող ծաղիկները խորհրդանշում են միասնական հայ ժողովրդին, որը կհաղթի միայն այն դեպքում, երբ կգտնվի ավելի խոհեմ և ապագա մարտահրավերներում կլինի ուժեղ և գիտելիքով զինված: